# ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

**ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

Պարսկաստանի համար տարեշրջանը 5 Փր. կամ 2 րբլ. ռս. թղթդրմ.

Ուրիշ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 10րդ շրջանի (94 օգոստ.—95 մայիս) բաժնորդագինն է 20 Փր. կանխիկ։ Կարելի է նաեւ բաժնորդագրուիլ քանի ամսի համար ալ որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ Փր. հաշուելով և 1894 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետևեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

**Ժ ՏԱՐԻ ԹԻՒ 4**

1894 ՕԳՈՍՏՈՍ 11

ՅՈՒԼԻՍ 30 (Հ. Տ.)

**ՇԱԲԱԹ**

Կը հրատարակուի Գշ. և Շբթ. օրեր

**ՊԱՏՄԱՆՆԵՐ**

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձունել չհրատարակուած ձեռագիրները։ Մանուցումներ կընդունուին հայերէն և Ֆրանսերէն լեզուով։ Մանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

*Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)*


## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պէտք է գիտնալ. — Անժամանակ ոգեւորութիւն. — Նամակ Ամերիկաի Միացեալ Նահանգներէն (Ուսքը). — Նուիրատուութիւն. — Տեղական. — Հայ բանտարկեալները Կ. պօլսի մէջ. — Կ. պօլսի շուկային վիճակը. — Թիւրքիաէն լուրեր. — Արտասահմանի լուրեր. — Ծանուցումներ. — Բանասիրական (Պրօֆեսօր Հէյզելը եւ մի հատուած Հայոց պատմութիւնից):

## ՊԷՏՔ Է ԳԻՏՆԱԼ

Մենք այս վերնագրի տակ քանիցս գրած և բացատրած ենք թէ մեր հայրենիքի ազատութեան գործին աշխատելու համար, բաւական չէ միայն զգալ այլ պէտք է. նաեւ գիտնալ:

Պէտք է գիտնալ թէ այդ նպատակով ի՞նչեր են կատարուած մեզնէ յառաջ, անոնց ո՞ր մասերը յաջողած են և ո՞ր մասերը չեն յաջողած և ինչո՞ւ համար չեն յաջողած։

Պէտք է գիտնալ թէ հիմա ի՞նչ վիճակի մէջ կը գտնուի մեր ազգ բարոյապէս, մտաւորապէս և նիւթապէս. ի՞նչնպաստաւոր հանգամանքներ կան այժմ և ի՞նչ աննպաստ հանգամանքներէ պաշարուած ենք։

Պէտք է գիտնալ թէ արտաքին քաղաքական հանգամանքներէն ո՞ր չափով կրնանք օգտուիլ և թէ այնպիսի նպաստաւոր հանգամանքներ կա՞ն այժմ թէ ոչ։

Ի հարկէ մարդ կը դժուարանայ խնդրին ամեն հանգամանքներին անձամբ ծանօթանալ մանրամասնօրէն. բայց մէկը խնդրին այս ինչ մասին աւելի ծանօթանալու միջոց և դիւրութիւններ ունեցած կը լինի, մի ուրիշն ալ ուրիշ մասին։ Անշուշտ ամեն Հայ միջոց և դիւրութիւն չունենար ազգային վիճակին և գործերին լիակատար ծանօթանալու և մէկ մարդէ չպահանջուիր համայնագէտ լինել. բայց պէտք է գոնէ աստիճան մը ծանօթանալ ատոնց երբ մէկը կը ցանկայ իր հայրենիքի ազատութեան գործին օգտակար լինել. ապա թէ ոչ, օգտի տեղ կրնայ վնաս տալ։

Բայց ծանօթանալու, գիտնալու համար, պէտք է հետաքրքրուիլ, լսել, կարդալ։ Ատոր համար է որ լրագիրներ կը հրատարակուին, գիրքեր կը հրատարակուին, որ մարդիկ կարդան, բան հասկնան, գիտնան թէ ի՞նչ վիճակի մէջ է իրենց ազգ, ի՞նչ գաղափար է այն որ կուզեն տարածել իրենց ազգի մէջ, կարելի՞ է այդ գաղափարի գործադրութիւնը և ի՞նչ միջոցներով և այլն։ Պէտք է ուրեմն կարդալ, հետաքրքրուիլ, իմանալ թէ ի՞նչ կայ չկայ ազգին մէջ, ո՞վ ի՞նչ գաղափար կը ներկայացունէ հրապարակի վրայ և ո՞ր գաղափարը, ո՞ր միջոցը համապատասխան է ազգի ներկայ վիճակին. ապա թէ ոչ, կարելի է կոյր և անգիտակից գործիք միայն դառնալ ձեզ առաջին անգամ պատահած ազգավնաս անձին որ մի քիչ լեզուանի լինի և շլացուցիչ մեծ մեծ յոյսեր տալով խաբէ ձեզ, ծածկելով բուն իր ներքին նպատակ։

Քանի՛ քանի՛ զգայուն Հայեր եղած են որոնք խորհած կամ լսած լինելով թէ Հայաստանի ազատութիւնը յեղափոխութեամբ պիտի կրնայ ձեռք բերուիլ (բայց այսչափ միայն լսած և ոչ աւելի հետաքրքրուած լինելով թէ յեղափոխութիւն ի՞նչպէս կը պատրաստուի, ո՛չ ալ լրագիր և գիրք կարդացած լինելով որ իրենց միտք զարգանայ այդ մասին և տեղեկութիւններ ունենան իրենց հայրենիքի ներկայ պէտքերին և կարողութեանը վրայ, այլ իրենց մտքի բոլոր պաշարը չափազանցուած լուրերէ միայն կազմուած լինելով), ենթադրած են որ եթէ մի քանի Ֆրանգ իրենց տուող լինի որ մի հրացան ուսերնին զարկած մտնեն Հայաստան (այն ալ՝ եթէ կարենան մտնել այդպէս...) յեղափոխութիւնը անպատճառ կը յաջողի, կարծելով թէ յաջողութեանը համար Հայաստանի մէջ իրենց պէս մէկ մարդ և մէկ հրացան միայն պակաս մնացած է։

Քանիներ այդպիսի բաներ մեզ գրած և մեր խորհուրդ ալ ուզած են։ Անշուշտ այդ խորհուրդ ուղելը մի քաղաքավարական ձեւ է. աւելի ճիշդն այն է որ իրենց խորհրդի մեր ալ հաճութիւն կուզեն։ Մեր խորհուրդներ իմանալ ուզողները կարող են Արմենիան կարդալ ուշադրութեամբ. այդ լրագիր անոր համար կը հրատարակուի որ ամեն մարդ կարդալով մեր խորհուրդներ լսէ. Նա մի նամակ է որ շաբաթը 2 անգամ կը գրենք և կը ղրկենք մեր բոլոր բարեկամների։ Բայց կան մարդիկ որ իրենց խելքի հաւնած են, լրագիր կարդալ, բան հասկնալ, տեղեկութիւն ստանալ, գործին էութիւնը գիտնալ չեն ուզեր.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՊՐՕՖԵՍՕՐ ՀԷՅԳԷԼԸ ԵՒ ՄԻ ՀԱՏՈՒԱԾ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

( Շար. 3դ թուէն )

Օրին գուրֆիւրստին մատնացոյց արաւ այն բանի մասին, որ ինքը իշխանական ծագումից է և Հայ իշխաններն իրեն պատուիրել են քրիստոնեայ մի իշխան գտնելու ու խորհուրդ տուեց նրան իր հետ Հայաստան Փալցերի մի սպայ ուղարկել, որպէսզի վերջինս կարողանայ ինքն անձամբ Հայերի գրութեան հետ ծանօթանալ։ Յովհ. Վիլհելմը լսելով Օրիի առաջարկութիւնը, նրան զանազան յանձնարարական նամակներով Հայաստան ուղարկեց: Նա ի միջի այլոց նամակներ գրեց Վրաստանի իշխ. Պանգրատ Մեպէ Արշիլին, Գանձասարի պատրիարք Բաբանին, Հայոց եկեղեցու պատրիարք Եղիազարին և ուրիշ շատ մեծամեծ Հայ մարդկանց: Թէ Օրին Հայաստանում ինչ գործեր կատարեց, դրա մասին մեզ տեղեկութիւն են տալիս 10 Հայ իշխանների կուրֆիւրստին գրած նամակները: Օրին ամենից առաջ դիմեց Եղիազար պատրիարքին, բայց նա դժբաղդաբար այդ ժամանակ վախճանուել էր և նրան յաջորդել էր մի ուրիշ պատրիարք, որ Հայոց ժամանակակից գրութիւնը բաւարար գտնելով, չէր համաձայնուում Օրիի հետ.

Գանձասար հաւաքուեցան 10 Հայ իշխանները, 4 արքեպիսկոպոս ու պատրիարքը, և Օրին սրանց յայտնեց, որ Փալցի կուրֆիւրստն Եւրոպայի ամենազօրեղ իշխաններից մէկն է, որ նպատակ ունի Հայաստանի գրութիւնը բարւոքել և այդ երկրի վանքերն ու եկեղեցիները հարստացնել: Պատրիարքը կուրֆիւրստի համար Օրիին շնորհակալութիւն յայտնեց: Օրին ի միջի այլոց ասաց նոյնպէս, որ այս մտադրութիւնն ի կատար ածելու համար կուրֆիւրստը պէտք է Հայաստան ուղարկի իր մարդկանց, պաշտօնեաներին և մի քանի հոգեւորականների, որպէսզի դրանք համոզուեն, թէ ո՞րտեղ և ի՞նչպէս պէտք է օգնել։ Բայց հայ հոգեւորականները չէին ուզում այդ մարդկանց իրենց ներքին գործերի մէջ խառնուելու մասին անգամ լսել. սակայն երբ Օրին յայտնեց, թէ Հայաստանի ազատութիւնից յետոյ Հայերը պէտք է պապի գերիշխանութիւնն ընդունեն, ինչպէս որ Լուսաւորիչն է արել (չնայելով որ այդ դէպքը պատմական իրականութիւն չէ), այն ժամանակ ժողովականների մէջ խռովութիւն ընկաւ. իշխանները համաձայնուեցան Օրիի հետ և երբ վերջինս նրանց պատմեց իր կուրֆիւրստից մեծ պատուով ընդունուիլը, ժողովականները չափից դուրս ուրախացան: Այդ 10 հայ իշխանները կուրֆիւրստին մի նամակ գրեցին, որի մէջ գովում էին Օրիին, նրան իշխանական սերունդից համարելով: Օրին մինչեւ կուրֆիւրստին դիմելն ուրիշ տեղեր էլ էր դիմել, բայց ի զուր. ուրեմն Փալցի կուրֆիւրստը նրա համար մի գանձ էր, որ նա գտաւ։ Օրիի նախնիքը քրիստոնէութեան հաւատարիմ ծառաներ լինելով մարտիրոսական կեանքով մեռել էին. նրա հայրն էլ քրիստոնեայ լինելու պատճառով թունաւորուել էր: Փալցի կուրֆիւրստական տան 4 պրինցեսուհիներն այդ ժամանակ Եւրոպայի ամենանշանաւոր գահերի վրայ էին բազմած (1). Հայաստանի գահը երկնքից կուրֆիւրստի համար էր որոշուած: Հայերը որոշեցին Օրիին և Ս. Յակոբայ վանքի վանահայր Մինաս վարդապետին կուրֆիւրստի մօտ ուղարկել, նրանից այդ ձեռնարկութեան համար օգնութիւն խնդրելու: Նրանք կուրֆիւրստին գրեցին ի միջի այլոց և հետեւեալ տողերը:

«Փառաբանում ենք Աստուծուն և շնորհակալ ենք Նրանից, մեզ ոչինչ չէ պակասում, մենք ունինք փող, կալուածներ, զինավարժ մարդիկ; մի խօսքով այն բոլոր բաները, ինչ որ այդ մեծ ձեռնարկութեան համար հարկաւոր է: Մեզ միայն մի առաջնորդ է պակաս, որ մեր երկրում առաջնորդի և կառավարի»: Հայերը նոյնպէս խնդրեցին, որ կուրֆիւրստն իր եղբայր Կարլոս Փիլիպպոսին զօրքով Հայաստան ուղարկի հասելով, որ յաղթութիւնն ինքնըստինքեան նրա կողմը կը լինի և դրանից յետոյ կուրֆիւրստը կարող է փառաւոր կերպով Հայաստան մտնել և այնտեղ թագաւոր օծուել: Հայերն ամեն կերպով խոստանում էին կուրֆիւրստի ձեռնարկութեան օգնել. այս տեղեկութիւններն ենք քաղում հայ իշխանների կուրֆիւրստին գրած նամակից: Ինչպէս ասացինք, այս նամակի բնագիրը մինչեւ այժմ կորած է և միայն դրա՝ Օրիի և Մինաս վարդապետի ձեռքով կատարուած Ֆրանսերէն թարգմանութիւնն է մեզ հասել, որ 1692 թ. սեպտեմբերի 13ին կուրֆիւրստին յանձնեցին. մինչեւ անգամ չգիտենք, թէ այդ նամակի բնագիրը կուրֆիւրստին է հասել և յետոյ կորել։ Բնագիրը կորած լինելով, չէ կարելի այս գրուածքի ճշտութեան կամ անճշտութեան մասին ուղիղ գաղափար կազ-

(1) Կայսրը, Սպանիայի և Փորթուգալիայի թագաւորները և Լեհաստանի թագաւորի որդին կուրֆիւրստի քոյրերի հետ էին ամուսնացած:

այդպիսիներն ալ՝ մինչեւ որ չերթան գլուխնին քարին չզարնեն, դառն փորձառութիւնների չենթարկուին, չեն արթննար, չեն հասկնար։

Զգալ, ոգեւորուիլ, գրգռուիլ միայն բաւական չէ, պէտք է գիտնալ։ Եւ ատոր համար է որ մենք կաշխատինք մեր լրագրի մէջ, փոխանակ երեւակայական ծրագիրներով գրգռելու, օդային ամրոցներով ոգեւորելու մեր ընթերցողներ, իրենց ճիշդ լուրեր, տեղեկութիւններ տալ ազգին ներկայ վիճակէն, տեղեկութիւններ նաեւ ազգին անցեալ գործունէութենէն՝ մեր հայրենիքի ազատութեանը համար, և միանգամայն հասուն խորհրդածութիւններ՝ մեր ներկայ վիճակի գիտակցութեանը վրայ հիմնուած։

Այդ նպատակով է ահա որ Արմէնիա նախորդ թուէն սկսած ենք «Բանասիրական» բաժնին մէջ արտատպել նաեւ Արձագանքի մէջ հրատարակուած մի յօդուած որ Իսրայէլ Օրիի հայրենասիրական գործունէութեան և ծրագրի մասին նոր տեղեկութիւններ կուտայ։

Այդ պատմական հատուած մի նոր փաստ ալ կաւելցունէ համոզելու համար ամենքին որ եթէ հայ ժողովուրդն ինք պատրաստուած չլինի իր ազատութեան համար, իր ի՛նչ ընելիքը չգիտնայ և իր ունեցած ներքին ոյժեր զարգացունելով չհասունցունէ, օտար թագաւորական ցեղերէ մարդիկ անգամ եթէ այս գործի գլուխ անցնին իրենց զօրքերով և Օրիի պէս գործունեայ մի հայազգի իշխան ալ ռուս կառավարութեան կողմէն երթայ դեսպան նստի Թէհրանի մէջ, դարձեալ երեւակայական և անիրագործելի մի ծրագիր կը դառնայ Հայաստանի ազատութեան գործը։

Պէտք է ուրեմն արծարծել միշտ հայ ժողովրդին մէջ ազգասիրական և հայրենասիրական եռանդը և միանգամայն հասկցունել իրեն իր իսկական վիճակ և այդ վիճակի պահանջները որ կարողանայ գիտնալ և որոշել իրեն չարն ու բարին, գործնականն ու անգործնականը։

Հայաստանի ազատութիւնը հայ ժողովրդին ձեռքով պիտի լինի։ Ուրեմն պէտք է որ հայ ժողովուրդն զգայ իր ազատութեան պէտքը, գիտնայ իր ազատութեան կերպը։

Մ. Փ.

---

## ԱՆԺԱՄԱՆԱԿ ՈԳԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Թէ՛ իմ ստացած մասնաւոր գրութիւններիս և թէ՛ զանազան կողմերէ ստացած տեղեկութիւններիս նայելով, կը տեսնուի որ մի քանի նաւահանգիստ քաղաքների մէջ գտնուող մեր պանդուխտ հայրենակիցների շրջանակին մէջ կրկնուելու մտադրութիւն կայ դարձեալ 1890 թուականի անխոհեմ շարժումները։

Մենք ամեն անգամ առիթը ներկայացած ժամանակ՝ թէ՛ բերանացի և թէ՛ մասնաւոր գրութիւններով և թէ՛ հրապարակաւ, կարելի եղածին չափ աշխատած ենք յայտնել մեր կարծիքներ այդ անժամանակ ոգեւորութիւններէ և անպատեհ շարժումներէ յառաջ եկած վնասների մասին և արդէն քանի քանի անգամներ եղած փորձերը ցոյց տուին թէ ի՛նչքան իրաւունք ունինք խոհեմութիւն ալ քարոզելու։

Ժողովրդին մէջ տեսնուած այդ անժամանակ ոգեւորութեան ամենագլխաւոր պատճառներէ մին է մի քանի բաղդախնդիրների միամիտ ժողովրդին մէջ մտնելով գրգռելը։ Չեմ գիտեր մինչեւ ե՛րբ այդպիսի բաղդախնդիրներ մուտ պիտի դտնեն մեր միամիտ ժողովրդի մէջ և այս կամ այն կուսակցութեան անուամբ գրգռելով ժողովուրդը, բուն գործիչներին խանգարեն։ Արդե՞օք այդ պարոնների համար բաւական չէ մինչեւ այժմ իրենց կատարած տխուր դերը։ Մինչեւ ե՞րբ դեռ պէտք է շարունակեն միամիտ ժողովրդի վստահութիւնը դէպի չարը գործածել։ Ինչո՞ւ չեն ուզեր հասկնալ թէ մի քանի տարիներէ ի վեր ժողովրդին մէջ տեսնուած յուսահատ անտարբերութիւնը՝ իրենց անտեղի գրգռութիւնների հետեւանքն է։ Այժմ որ անվհատ գործիչների ձեռքով՝ նորէն ժողովրդին մէջ քիչ շատ անտարբերութենէ սթափում մը կը տեսնուի, ինչո՞ւ նորէն կը գրգռեն և նորանոր սխալներ գործելու կառաջնորդեն։

Մի քանի նաւահանգիստ քաղաքներէ ինձ կը գրեն թէ հնչակիստներ և դաշնակցութիւնիստներ կասեն թէ այս ինչ կամ այն ինչ տեղեր զէնք կը տրուին և թէ ամեն կողմ մեծ պատրաստութիւն տեսնուած է յեղափոխութիւն հանելու համար. ի՞նչ կեցեր էք, շո՛ւտ դիմեցէք դէպի Աւետեաց երկիրը և այլն և այլն։

Մեր միամիտ հայրենակիցներէ շատեր այդ գրգռիչների խօսքերէն խաբուելով, իրենց գործեր թողած, պատրաստութիւն կը տեսնեն մեկնելու և այդ մասին ինձ խորհուրդ կը հարցնեն։

Ես ինձ համար պարտականութիւն կը համարիմ հրապարակաւ զգուշացունել մեր պանդուխտ հայրենակիցներ այդ խաբեբայ բաղդախնդիրների հաւատ ընծայելէ, որոնք ազատասիրական գաղափարի անուան ներքեւ սքողուելով, դաւաճանութիւն կանեն ազգին։

Ի հարկէ պէտք է ցաւիլ այդ ամենի վրայ. բայց ի՛նչ արած, ստիպուած ենք միշտ և հանապազ միեւնոյն սխալների կրկնութիւնը տեսնել։

Բայց մինչեւ ե՛րբ...։

ՊԱՆԴՈՒԽՏ

---

## ՆԱՄԱԿ

### ԱՄԵՐԻԿԱԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ

Ուսթըր 26 յունիս 1894

Սուրբ Փրկիչ եկեղեցւոյ ժողովասրահն մի արտակարգ շքեղութիւն ունէր յունիս 24ի կիրակի օրը. Արմէնիաի համակիրներ այդ իրիկուն կը տօնէին Արմէնիաի տասնամեակը։ Բեմը ծաղիկներով և դափնիներով զարդարուած էր. այդ կանաչազարդ պսակների մէջ կը փայլէր Հայոց Հայրիկի մեծագիր պատկերը, շրջապատուած Մայր Հայաստանի և վարդանանց պատերազմի պատկերներով. սեղանի մը վրայ գրուած էին Արմէնիաի կազմեալ տարեկանները, աջ ու ահեակ ծաղիկների մէջ. խորհրդաւոր կերպիւ բաց ձգուած էին մի քանին այն յօդուածներէ որոնք պատմական նշանակութիւն ունին Արմէնիաի տասնամեայ շրջանին մէջ։

Հանդէսը բացուեցաւ «Տէր կեցո զՀայս» յոտնկայս երգելով. խօսուեցան ճառեր, արտասանուեցան Արմէնիաի խմբագրի գրած ոտանաւորներ ինչպէս նաեւ երգուած երգերի մեծ մասը Տիար Փորթուգալեանի գրածներն էին։

Հանդէսին ատենապետը բացատրեց օրուայ հանդէսին նշանակութիւնը և Արմէնիաի կատարած դերը 9 տարուայ ընթացքին մէջ. նկարագրեց անոր խմբագրի կենսագրութիւնը համառօտակի, յիշելով սակայն այն ամեն նշանաւոր անցքեր և գործեր որ գլխաւոր տեղ կը բռնեն իր կեանքի պատմութեանը մէջ, սկսած մանկութենէն մինչ ցարդ։

«Մկրտիչ Փորթուգալեան ծնած է Կ.պօլիս 1848ին, հոկտեմբերի 9/21ին, Մայր Եկեղեցւոյ թաղին մէջ և իր ուսում առած է նոյն թաղի Պէզճեան վարժարանին մէջ։

«Նա պատանի էր դեռ երբ Պօլսոյ ժողովուրդը ժգոհ իրենց Պատրիարքէն, զայն վար առնելու խուլ դղրդիւն մը կը տիրէր. ահա պատանի յեղափոխականը առաջինն կը լինի որ Գումգափուի Մայր եկեղեցւոյն մէջ կուտայ առաջին նշանը չի յիշուի՛. բոլոր ժողովուրդ կը միանայ, կը ձայնակցի և Պօղոսի պէս միապետական պատրիարքը վար կառնուի քիչ ատենէն։ Այդ միջոցներ պատանի Փորթուգալեանը հայասէր Ֆրանսացիի մը (1) գրատանը մէջ կաշխատէր, Ֆրանսերէն դասեր նաեւ առնելով իր վարպետէն. ո՞վ կրնայ կասկածիլ թէ այդ գրատան մէջ մթերեալ ազատաշունչ Ֆրանսերէն գրքերն ի՛նչ դերեր կատարած են վառվռուն և եռանդոտ պատանւոյն վրայ, որ դեռ երիտասարդ չեղած, 21 տարեկան հասակին մէջ, Եւդոկիա կը հրաւիրուի դասատուական պաշտօնով։ Երեք տարի միայն մնալով Եւդոկիա, ժողովուրդը շարժեց և յեղափոխեց ընկերութիւններով, կիրակնօրեայ լսարանով և դասարանով որով վէճեր ունեցաւ խաւարամիտ մենծ աղաների հետ որոնք պատճառ եղան իրեն դատարանների և բանտերի մէջ մտնելուն. վերջ ի վերջոյ իբրեւ յեղափոխական Կ.պօլիս զրկուեցաւ։»

«Կ.պօլսոյ մէջ աւելի գործօն դեր կատարեց. հայրենասիրութիւն և երիտասարդական աւիւն կը մղէին զինքն յառաջ։ Ստանձնելով Ասիա թերթի տնօրէն-խմբագրութիւնը, անդրդուելի քաջութիւնով կռուեցաւ «Ղալաթիոյ օճախ»ին դէմ որ հակախրիմեան կուսակցութեան վոհմակն էր։ Այս անգամ ալ իրեն թշնամիներ յաջողեցան կառավարութեան միջոցաւ խպառ փակել տալ այդ ազատական թերթն։ Բայց գործելու ասպարէզը միշտ բաց է ճշմարիտ գործողի մը առջև։ Այդ միջոցին Տիար Փորթուգալեան հիմնադիրներէ մինեղաւ Տիար Չերազի հետ 10ի չափ անձով Արարատեան ընկերութեան որու հիմնադիրներն որոշած էին լոյս և գիտութիւն

---

մել: Հէյդէլի կարծիքով Հայաստանի վաճառականները հրեայ և յոյն վաճառականներից աւելի սրամիտ և հնարագէտ էին և 18րդ դարում Եւրոպայի արքունիքներում նշանաւոր և ազդեցիկ դեր էին խաղում։ Օրին ինչպէս և Մխիթար Սեբաստացին (?!?) վաճառականներ էին. վերջինս 1712 թ. հիմնեց Մխիթարեան Միաբանութիւնը։ Մխիթարեանն իբրեւ վաճառական մինչեւ իր միաբանութեան հիմնելը ճանապարհորդել էր եւրոպական տէրութիւններում: Օրին Հայաստանի ամենանշանաւոր իշխաններից մէկի ցեղիցն էր սերւում. իսկ այն բանը, ինչ որ նա պաշտպանել է, զարմանալի է, բայց անհաւատալի չէ: Թէ հայերը քրիստոնէութեան պատճառով պարսիկներից ճնշուած էին, ճիշտ է: Հայաստանում դեռ վաղուց կային մի խումբ նշանաւոր կաթոլիկներ, Դոմինիկեան, Պաօլօ, Փիրոմօլիի, Պալանոսի և Անդրերի միսիոնները, որոնց ուղարկել էր Հռոմի Ուրբանոս Ը. պապը, յուսալով, որ սոցա միջոցով կարող է կաթոլիկ եկեղեցու համար մարդիկ որսալ(1)։ Բայց անհաւանական չէ՞ արդեօք, որ 10 հայ իշխանները խոստացել էին պապի գերիշխանութիւնն ընդունել, հարցնում է Հէյդէլը։ Ինչպէս երեւում է, հայ իշխանները իրենց նպատակի իրագործման խոչընդոտ դժուարութիւնների և անյարմարութիւնների մասին լաւ չէին մտածել, կամ իրանց համար այդ բանը պարզ չէր։

Գերմանացի մի կուրֆիւրստ պէտք է մի փոքրիկ զօրագնդով Հայաստան գնար, պարսից շահին յաղթէր և Հայաստանի թագաւոր դառնար. մինչեւ անգամ եթէ կուրֆիւրստի եղբայր պրինց Կարլոսն էլ գնար, մի երկրորդ գահ էլ նա պէտք ձեռք բերեր: Հէյդէլի կարծիքով այս լուրերը կասկածելի են։ Իսկ ի՞նչպէս եկաւ Օրին կուրֆիւրստի մօտ: Օրին կուրֆիւրստի վրայ գրած մի նամակում յայտնում է, որ ինքը մտադրութիւն է ունեցել Ֆրանսիայի Լուդվիկ 14րդ թագաւորի օգնութեան դիմելու. այս նպատակով նա գնացել է Ֆրանսիա և այնտեղի հարուստ մարդկանց համար շռայլ ապրանքների առեւտուր սկսել է։ Այդպիսով նա առիթ է ունեցել սպաների և արքունիքում ծառայող մարդկանց հետ յարաբերութիւն ունենալով և Ֆրանսիայի դրութեան հետ ծանօթանալ. երբ Փրանսիայում պատերազմ ծագեց, Օրին 6 արշաւանքներում մասնակցեց և միշտ մի յարմար րոպէի էր սպասում իր մտադրութեան մասին Լուդվիկ թագաւորին հետ խօսելու: Բայց նա չկարողացաւ թագաւորին հետ խօսիլ. որովհետեւ միշտ արգելքներ և անյարմարութիւններ էին պատահում:

(Շարունակելի)

(1) Neumann. Geschichte der Armenischen Literatur. 242.

(1) M. Pierre Troy որ Կ.պօլսի մէջ հրատարակած էր մի տետրակ խնդիր հայկական — La Question arménienne անունով և Աղդ. Սահմանադրութեան վէճերին առթով:

տարածել Հայաստանի մէջ. քննիչ-տեղեկաբեր զրկեցին Տիար Փորթուգալեանը որ Սամսոն-Եւդոկիա գծով Սեբաստիա, Մալաթիա, Խարբերդ, Տիգրանակերտ, Սղերտ, Բաղէշ պտըտելով Վան հասաւ և հոն Ալիւր գիւղի մէջ բացաւ առաջին դպրոցը։ Տարի մը մնաց Վան, դասախօսելով Հայկազեան վարժարանին մէջ, կազմելով կիրակօրեայ դպրոց և լսարան պահող ընկերութիւններ և վերադարձաւ Թիֆլիս ուր արդէն մի անգամ գնացած և 2 շաբաթի չափ մնացած էր Վան երթալէն առաջ։ Տփղիս հասնելով, կը դիմէ իւր նախածանօթ Գրիգոր Արծրունուն որու «Մշակ» լրագրին կաշխատակցի մօտ երկու տարի մինչև ռուս-թիւրքական պատերազմին վերջանալը։ Խաղաղութիւնն հաստատուելով՝ ռուսական շոգենաւներին Կ. պօլսի և Պաթումի մէջ երթեւեկութիւնն սկսածին պէս, առաջին շոգենաւով կերթայ Կ.պօլիս. անկէ ալ Արարատեան ընկերութեան կողմէն տեսչի պաշտօնով կերթայ Վան ուր մի քանի գիւղերի մէջ դպրոցներ կը բանայ և մի վարժապետանոց ալ Վան քաղաքի Այգեստանին մէջ։ Գրիգոր Արծրունին ալ իր կողմէ հանգանակութիւն բանալով Մշակի մէջ, կօգնէ այդ կրթական գործի։

«Ինչպէս ամեն տեղ, և Վանի մէջ կը գործէր Փորթուգալեան ազատամիտ և ուսեալ երիտասարդ կուսակցութեան մէջ. Վանցի երիտասարդները մեծ ոգեւորութեամբ կը խօսին այն տասնեակ տարիներու մասին...։

«Արարատեան ընկերութիւնը Դըպրոցասիրաց և Կիլիկեան ընկերութիւններին հետ միանալով «Միացեալ ընկերութիւնք»ը կազմած էր. բայց ինչպէս կը յուսացուէր և Կովկասէն ալ իրենց խոստացուած էր, այդ միութեամբ այնչափ չզօրացաւ իրենց նիւթական վիճակը։ «Միացեալ ընկերութիւնք»ը իր հասոյթների անբաւականութիւնը պատճառելով, փակեց Վանի վարժապետանոցը և Փորթուգալեան Կ.պօլիս կանչուեցաւ ուր իրեն առաջարկուեցաւ Կիլիկիա երթալ նոյն տեսչական պաշտօնով։ Բայց նա Վանի մէջ իր արդէն սկսած կրթական գործը շարունակել ցանկալով, կը հրաժարի «Միացեալ ընկերութեանց» պաշտօնէութենէն և Վանի նահանգապետ փաշային ուղղուած մի յանձնարարագիր ստանալով հոգելոյս Ներսէս պատրիարքէն, կը վերադառնայ Վան, կը բանայ իր տեսչութեան տակ «Կեդրոնական վարժարան»ը, իր թեւիտակ հաւաքելով ընկերութեան վարժապետանոցի ցրուած ձագերը և 3-4 տարուայ մէջ ազգին և մանաւանդ Վանեցուն տուաւ այն քանի քանի շրջանաւարաներ և գործիչներ որոնք այսօր Վասպուրական աշխարհի հոգիներն են. մենք ատոնցմէ շատերին տեսանք Ջուխ. կէտիւկի և այլ լեռների վրայ թիւրք և քիւրտ հրոսակների հետ կռուելիս, բանտերի և աքսորների մէջ, կախաղանի վրայ. բանտն ու աքսորն ալ չի կրցին բռնադատել այդ արիներ. բանտէն փախան բանտապահների զէնքեր կողոպտելով, աքսորէն փախան վարպետ միջոցներով, կրկին մտան ժողովրդին մէջ և կը գործեն։ Կը գործեն անաղմուկ, առանց իրենց առջևէն թմբուկներ ածելու ուրիշներին պէս. կրկին կը բռնուին, կրկին կազատուին. կերթան յետ ինկած գիւղերի մէջ, իբրեւ դասատուներ հաց ու պանրով միայն կաշխատին ժողովրդին մէջ։

«Կեդրոնական դպրոցի կեանքն կարճ տեւեց զի երջանկայիշատակ Ներսէսի մահից վերջ թիւրք կառավարութիւնն սկսեց սանձարձակ գործել. Վանից հսկողութեան տակ հեռացուց Տիար Փորթուգալեանը 1885ին Մեծ պահոց Ծաղկազարդի կիրակիի նախորդ օրը։ Կ.պօլսի մէջ մէկ ամսի չափ ի զուր դատի սպասեց. նկատեց որ կառավարութեան նպատակն էր զինք անգործութեան դատապարտել Կ.պօլսի մէջ, ինչպէս որ Հայրիկին ալ Կ.պօլիս կը զրկէր նոյն նպատակով և ինչպէս ըրաւ նաեւ մեր նախորդ հոգեւոր հովիւ Հայր Սարաճեանին, զրկելով Պուլանըխների հայ ժողովուրդը նորա հայրախնամ հովուութենէն։»

(Շարունակելի)

Ա.

## «ԱՐՄԷՆԻԱ»Ի ԲԱԺՆՈՐԴԱԳՆԻ ՎՃԱՐՄԱՆ ԴԻՒՐՈՒԹԻՒՆ

Երբեմն մեզ կը հարցնեն թէ Արմէնիաի գործակալն ո՞վ է իրենց քաղաքի մէջ որ բաժնորդագինն անոր յանձնեն։ Մենք գործակալութիւններ հաստատելու պէտք չենք տեսած քանի որ փոստին միջոցով կարելի է բաժնորդ գրուիլ և Եւրոպաի ամենայետին գիւղին մէջ ալ փոստ կայ։

Բայց անոնց համար որոնց նեղութիւն կը լինի նամակ գրել և երթալ փոստը «մանտա տը փոստ» առնելով նամակին մէջ ծրարել և ապահովագրել տալով մեզ զրկել, ահա մի ուրիշ դիւրութիւն ալ կը ներկայացունենք։

Ֆրանսական փոստի վարչութիւնը Ալմանիաի, Աւստրօ-Հունգարիաի, Պէլժիգի, Եգիպտոսի, Իտալիաի, Զուիցերիաի, Հոլանտաի և Ռումանիաի փոստի վարչութիւններին հետ ունեցած մասնաւոր պայմանագրութեամբը կարող է այդ երկիրների մէջ (միայն այդ երկիրների մէջ և ոչ ուրիշ տեղեր. օրինակ Պուլկարիաի կամ Ամերիկաի համար չէ կարելի) մասնաւոր անհատների ունեցած հաշիւները (1 ֆրանգէն մինչեւ 1000 կամ 2000 ֆրանգ, երկրին համեմատ) դանձելով յանձնել Ֆրանսաի մէջ իրենց տիրոջ։ Միայն թէ այս գործողութեան համար որ recouvrement կը կոչուի, 30-40 ֆրանգի չափ գումարին համար 1 ֆրանգի չափ ծախք կերթայ։ Ուստի յիշեալ երկիրներին մէջ գանուող այն բաժնորդներ որոնք այդ 1 ֆրանգ ծախքը յանձն կառնեն, կարող են մի քարտ փոստալով իմացունել մեզ և մենք իրենց բաժնորդագինի ստացագիրը կանխաւ կը յանձնենք այստեղ փոստին և իրենց քաղաքի փոստի վարչութեան կողմէն մեր ստացագիր իրենց գրասենեակ բերուելով կը յանձնուի և բաժնորդագինն իրենցմէ ստանալով կը զրկուի մեզ ուղղակի, առանց բաժնորդը իր տեղէ շարժելու, «մանտա տը փոստ» առնելու կամ նամակ գրելու պէտք ունենալու։

Արդէն յիշեալ երկիրների մէջ բնակող մի քանի բաժնորդների համար ենթադրելով որ բաժնորդագնի վճարման սովորական կերպը իրենց զբաղումների մէջ կրնայ նեղութիւն պատճառած լինել, նամակով առաջարկած ենք recouvrement անել փոստի միջոցով և եթէ իրենցմէ ոեւէ դիտողութիւն չընդունինք մեր ներկայացուցած հաշուի կամ վճարման կերպին վրայ, լռութիւնը հաճութեան նշան համարելով, այդ կերպը պիտի գործադրենք իրենց դիւրութեան համար։

— Ինչպէս ծանուցուած է արդէն Արմէնիաի մէջ, 10րդ շրջանի սկզբէն մինչեւ վերջ (1894 օգոստ. — 95 մայիս) բաժնորդագրուողները 20 ֆրանգ միայն կը վճարեն ամբողջ շրջանին համար։ Այդ գումար կարող են մաս առ մաս վճարելով (5 կամ 10 ֆրանգով) ամբողջացունել. բայց ստացագրին մէջ 5 ֆրանգը 2 ամսի համար և 10 ֆրանգը 4 ամսի համար կը նշանակուի. իսկ երբ 20 ֆրանգի գումարը ամբողջանայ մաս առ մաս վճարուելով, այդ ժամանակ վերջին մասի ստացագրին մէջ կը նշանակուի թէ ամբողջ շրջանին համար վճարուած է։

Անոնք որ այս շրջանի սկզբէն, այսինքն 1894 օգոստոս ամսէն, չեն բաժնորդագրուիր, ամսական 2 ½ ֆրանգ պէտք է վճարեն. քանի ամսի համար որ ուզեն կրնան բաժնորդագրուիլ այդ հաշուով և 1895 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Փարիզէն Բարձրապատիւ Իշխան Լուսինեան նուիրեց 1 օրինակ Արմէնիա Պուքրէշի (Ռոմանիա) Հայոց վարժարանին։

Գահիրէէն Տիար Սարգիս Պէլեան նուիրեց 1 օրինակ Արմէնիա Խոյի (Պարսկաստան) եկեղեցու քահանային և 1 օրինակ Սայտաւար գիւղի քահանային։

Բրօվիտէնսէն (Մ. Ն. Ամերիկա) Տիար Գ. Բարե նուիրեց 1 օրինակ Արմէնիա Հաֆթուանի (Պարսկաստան) վարժարանին։

## ՏԵՂԱԿԱՆ

Թէեւ Մարսէյլի մէջ քօլէրա չկայ տարածուած, բայց օտար կառավարութիւններ Մարսէյլէն գնացողները քարանթինաի ենթարկել սկսած լինելով, Քաղաքապետական խորհուրդը չորեքշաբթի օրի նստին մէջ որոշեց դիմել ձեռնհաս իշխանութիւններին, վերցնել տալու համար այդ արգելք, որ վաճառականութեան վնասելու և Մարսէյլի բնակիչների մտքին մէջ շփոթութիւն ձգելու միայն կը ծառայէ։

— Փարիզի բժիշկներէն Տօքթէօր Երուանդ Արշակունի-Իւթիւճեան որ Եգիպտոսի մէջ երկաթուղային վարչութեան բժշկի պաշտօնը կը վարէ, եռամսեայ արձակուրդ ստանալով եկած է Ֆրանսա։ Տիար Արշակունի որ Մարսէյլի հայ գաղթականութեան Հոգեւոր Հովուի որդին է, 3 օրէ ի վեր այստեղ կը գտնուի և շուտով կը մեկնի դէպի Փարիզ։

## ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ Կ.ՊՕԼՍԻ ՄԷՋ

Կ.պօլսէն յուլիս 18/30ին հաղորդած են մեզ հետեւեալը։

«Կեդրոնական բանտը փլչելու վտանգ կսպառնայ։ Անմեղութիւննին յայտնի և ի զուր բանտը նետուած Հայերէ մի քանին արձակեցին այս օրեր. բայց այդպիսի բազմաթիւ անմեղ Հայեր լցուած են դեռ բանտին մէջ։ Բոլոր բանտարկեալները միացած բողոքեցին թէ՛ Սուլթանին և իր մօր և թէ՛ դեսպաններին թէ բանտը փլչելու վտանգին մէջ է. բայց մինչեւ այժմ ո՛չ մէկ պատասխան կամ տնօրինութիւն եղած է։»

## Կ.ՊՕԼՍԻ ՇՈՒԿԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ

Շուկայի արդի վիճակին վրա հետեւեալ տեղեկութիւնները կը քաղենք.

Շուկային բաց մասն է Մահմուտ փաշայի դռնէն մինչեւ Աճի-Զէշմէ և անկից Մէրճանի դուռը, Զինճիրլի խանով մէկտեղ։ Մնացեալ մասերը տախտակով գոցուած են։ Վարագճի խանի դիմացի դռնէն մինչեւ Պէզէսթէն բոլորովին վար առած են և հիմա փլատակները այլուր կը փոխադրեն։ Թավուգ Պազարի կողմէն Քիւրքճիները բաց են։ Ատկից կ՛երթըցուի Քալբաքճիներուն մէջտեղ, որուն երկու կողմը տախտակով գոցուած է. միմիայն մէջտեղը 42 խանութ աջ ու ձախ, թէեւ փակ են բայց բոլորովին անվնաս իրենց կամարով։

Պիթ-Բազարի կողմի մէկ դուռն ալ բաց է փլատակները փոխադրելու համար, զորս կը լեցնեն Սուլթան-Պայազիտի հրապարակին խորտուբորտ տեղերը։

Շուկայի խանութպաններէն ոմանք հաստատուած են այն փայտէ տաղաւարներուն մէջ որոնք յատկապէս իրենց համար շինուած են Սուլթան-Ահմէտի մզկիթին բակին մէջ։

Անոնք որ քիչ շատ կարողութիւն ունին, իրենց խանութները փոխադրած են ասդին անդին։ Մեծամասնութիւնը կը սպասէ դեռ։

Քանի մը խանութպաններ կը պատրաստուին Սըվազ կամ Սամսոն գաղթել։

(Հայրենիք)

## ԹԻՒՐՔԻԱՅԷՆ ԼՈՒՐԵՐ

Քոլէրան կը շարունակէ իր կոտորածներ, աւելի կամ նուազ չափով, Լիբիէի, Պրուսայի, Գոնեայի, Եոզղատի, Մալաթիայի և Կեսարիայի մէջ։

— Սեւ ծովի ռուսական ծովեզերքէն Կ.պոլիս եկողները Գաւագի կամ Սինոպի առջեւ 24 ժամ քարանթինայի կենթարկուին։

— Դամասկոսէն Հօրան չինուած երկաթուղին սկսած է բանիլ յուլիս 18ին։ Դամասկոսէն մինչեւ Մէզարիպ որ մինչեւ այժմ 3 օրէն կերթային ուղտով, այժմ երկաթուղիով կէս օր ալ չտեւեր։

— Նախորդ թուով հրատարակած ենք թէ իտալացիները տիրեցին Քասալային որ երբեմն Եգիպտոսի կը պատկանէր։ Այժմ Կ.պոլսէն կիմացուն են որ Բ. Դուռը Քասալայի գրաւմանը դէմ մի բողոքագիր կը պատրաստէ որ պիտի ղրկէ իտալական և անգլիական կառավարութիւններին։

— Իտալական կառավարութիւնը Կ.պոլսի դեսպան նշանակած էր Պր. Քադալանին, Սպանիայի իտալական դեսպանը։ Դեռ Բ. Դրան հաւանութիւնը չառնուած, Պր. Քադալանի ճանբայ հանուած էր Կ.պոլիս երթալու համար. բայց երբ Վիէննա հասաւ, հրաման ստացաւ արտաքին գործերի նախարար Պարոն Պլանէն որ Վիէննա մնայ մինչեւ յետոյ հրաման չստանալ։ Սուլթանը հաւանութիւն չտար Պր. Քադալանին դեսպանութեան պաշտօնով Կ.պոլիս հաստատուելուն։ Ասիրութիւն է որ մի դեսպան իր պաշտօնատեղ երթալէ առաջ, նոյն երկրի վեհապետի հաւանութիւնն ալ կառնուի։ Սուլթանի անհամաձայնութեան պատճառներէ մին ալ այս է որ իտալական նորընտիր դեսպանի կինը մի թիւրքահպատակ յոյն է, Լոնտոնի օսմանեան նախկին դեսպան Միւզուրիս փաշայի աղջիկը։

Այժմ իտալական կառավարութիւնը կը պնդէ Պր. Քադալանին իբրեւ դեսպան Սուլթանին ընդունել տալու համար և Սուլթանն ալ կը շարունակէ մերժել. իսկ Պր. Քադալանի կը մնայ Վիէննա։

Անգլիական և աւստրիական դեսպանները խորհուրդ տուեր են Բ. Դրան շատ խիստ չվարուիլ և չվշտացուցնել իտալական կառավարութիւնը այս խնդրի համար։

— Կրէտէի մէջ յուզումը կը շարունակուի մի քանի ամիսներէ ի վեր։ Կղզուն դլխաւոր քաղաքների բնակիչները հրապարակաւ ժողովներ կանեն և հանրագիրներ կը ղրկեն ուղղակի Սուլթանին, խնդրելով որ իրենց արդէն ունեցած առանձնաշնորհումների համեմատ մի քրիստոնեայ կառավարիչ դրուի իրենց վրայ. Ազգային Երեսփոխանական ժողովին՝ որի նիստերը դադրած են 4 տարիէ ի վեր, դումարուելուն արտօնութիւն տրուի և դանձային մի քանի բարենորոգումներ՝ որոնց գործադրութիւնը սահպողական մի պէտք դարձած է, շուտով կարգադրուին։ Կղզուն կառավարիչ Մահմուտ Ճէլալէտտին փաշան մի հրամանագիր հանեց որով կարգիլէր հրապարակական դումարումները։ Այդ հրամանագիրը դէշ տպաւորութիւն ունեցաւ Կրէտեցիներին վրայ որոնք դրդռուեցան այդ նոր ճնշման դէմ։ Բազմաթիւ ղինուած Յոյներ Ճէլալէտտին փաշայի բնակած ամրանոցին մօտերն երթալով, հրացաններն ուղղեցին անոր նստած սենեկին որի պատուհանները բաց թողուած էին։ Մի գնդակ ուղիղ գնաց զարկաւ կառավարիչ փաշայի ճակատին և ծանր կերպով վիրաւորեց անոր։ Ճէլալէտտին փաշա՝ արդէն Կրէտէէն ձանձրանալով հրաժարական տուած էր պաշտօնէն բայց Սուլթանը չէր ընդունած. այս դէպքէն յետոյ, թոյլատրուեցաւ իրեն Կ.պոլիս վերադառնալ։

Սուլթանը Ճէլալէտտին փաշայի տեղ Կրէտէ կը ղրկէ Սպանիայի օսմանեան նախկին դեսպան Թուրխան պէյը որ այս տարի Փարիզի Միջազգային Առողջապահական ժողովին մէջ օսմանեան պատուիրակ եղած էր և վերջերս ալ Փարիզ պիտի ղրկուէր հրաժարած դեսպան Լատա փաշային տեղ։ Թուրխան պէյ լաւ յունարէն գիտէ և ասոր համար է որ Կրէտէ կը ղրկեն զինք ուր Թիւրքերն անգամ յունարէն կը խօսին։

Իսկ Փարիզի դեսպանութեան համար ընտրելի կը համարուին Մեծ Եպարքոսին եղբայր Շաքիր փաշան որ մի քանի ամիսներէ ի վեր Աթէնքի դեսպան նշանակուած է բայց դեռ չէ գնացած իր պաշտօնատեղ, Կրէտէի նախորդ կառավարիչ Մահմուտ Ճէլալէտտին փաշայի որդին Միւնիր պէյը որ արտաքին գործերի նախարարութեան մէջ պաշտօն կը վարէ և որ ասկէ առաջ Փարիզ երթալով, այնտեղի լրագիրներուն խմբագրութիւններին հետ ծանօթացած է. վերջապէս նաեւ Հռովմի դեսպան Մահմուտ Նէտիմ պէյը որ Պարոն Պլանի հետ յարաբերութեան մէջ գտնուելէն շատ գոհ չէ և մի քանի անգամ արդէն հրաժարական ղրկած է Կ.պոլիս։

— Սարաենիկէն Տէտէաղաճ չինուող երկաթուղու դծին երկրաչափ Ֆրանսացի Պր. Բրեվոն որ պուլկար աւազակներ լեռը տարած էին 3000 օսմ. ոսկի (69,000 ֆրանգ) փրկանք պահանջելով, յուլիս 18ին արձակուեր է։ Երկաթուղու Ֆրանսական ընկերութիւնը չուզելով թողուլ որ իր պաշտօնեան երկար ժամանակ նեղուի աւազակներուն մօտ մնալով, վճարեր է ինք այդ գումար և անցուցեր է Բ. Դրան հաշուին։

— Կ.պոլսի երկրաշարժէն վնասուածներին օգնելու համար Սուլթանի նախագահութեան տակ կազմուած յանձնաժողովի հանգանակած գումարը, մինչեւ օգոստոս մէկ, հասեր է 1,786,359 ղրուշի (357,261 ֆրանգ)։ Ցանկալի է անշուշտ որ օգնութիւնները անխարաբար բաշխուին քրիստոնեայներին և մահմետականներին, իրենց կրած թշուառութեան վիճակը միայն նկատի առնելով։ Այդ բաշխման գործողութիւն աւելի դիւրաւ կը կատարուի եթէ իւրաքանչիւր ազգի յատկանալիք գումարը իր Պատրիարքարանի յանձնուելով, եկեղեցիների Թաղական խորհուրդներին միջոցով բաշխուի իրենց Թաղի կարօտեալներին։

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Նիւ Եորքէն կը հեռագրեն թէ Միացեալ Նահանգներու ցորեն արտադրող մի քանի նահանգներն այս տարի շատ քիչ անձրեւ եկած լինելով, հունձքերը լաւ չեն։

— Թիւրքիայի Սուլթանը Կ.պոլսի ֆրանսական դեսպան Պր. Քանպոնի և Փարիզի օսմանեան դեսպանական գործակատար Միսաք էֆէնտիի միջոցով շնորհակալութեան հեռագիր ղրկեր է Ֆրանսական կառավարութեան, Կ.պոլսի երկրաշարժէն վնասուածներին օգնելու համար Փարիզի մէջ մի յանձնաժողով կազմուած լինելուն առթիւ։

— Անգլիան պաշտօնապէս յայտարարեց թէ Զինի և Ճավոնի կռուին մէջ ինք չեզոք պիտի մնայ։

— Միացեալ Նահանգներու Ծերակոյտը մի նոր օրէնք դրեր է որով ապրիշանականներին կարգիլուի Ամերիկա մտնել։

— Վիէննայէն կը հեռագրեն Լոնտոնի լրագիրներին թէ հաւանական կերեւի որ Զարը վաւերական պիտի ճանչէ Պուլկարիայի Ֆէրտինանտ իշխանի իշխանութիւնը։

— Պուլկարիայի Քոթէլ (Թրքերն Քազան) քաղաքը ամբողջովին այրեր է։ Բնակիչները շրջակայ լեռներն ելնելով վրաններ զարկած կը բնակին։ Սոֆիայի և ուրիշ քաղաքներու մէջ հանգանակութիւններ բացուած են դժբաղդներին օգնելու համար։ Քոթէլի մէջ 1394 տուն և 5.700 բնակիչ կար։


ԳԱՌՆԻԿ ՏԷՕՔՄԷՃԵԱՆ
Ցանցնակատար — Գործակալ
ամեն տեսակ
Գրական եւ Տպագրական արտադրութեանց
եւն. եւն. եւն.
Հաստատեալ 1890 ի Թուսմոգ

Պատիւ ունիմ ծանուցանել Պուլկարիոյ և Ռումանիոյ Ազգային վարժարանաց Պատուարժան Հոգաբարձութեանց, որ դպրոցական 94.95 նոր շրջանին առթիւ պատրաստած եմ լաւագոյն ու դիւրաւոյց դասագրոց մեծաքանակ մթերք մը, և փութով ու զոհացուցիչ պայմաններով կը հայթայթեմ զայնս. փոխադրագոյց նախապէս կը յղուին նմոյշներ, ամէն մէկ օրինակի համար 1 ֆրանգ նամակադրոշմի փոխարէն։

Հասցէ՝
K. Deukmédjian
(Bulgarie) ROUSTCHOUK



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ



Մ. ՔԱՐՄԷՆԻԱՆԻ ՀԱՒԵԱՐՄԱՐ (Արմենիայի Ա. առաքելական թիւերը այժմ բոլորովին ապառած և միեւնոյն ժամանակ շատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն դէթ 30ի չափ ամփոփուած են Ցուշարարի մէջ որ ութսնալ դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ)։ (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 սանթիմ

Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիայի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացուցնէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցներու դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 սանթիմ) ,20 սանթիմ.

ԺԱ. ԹՈՄԱՍ ԲՈՑԱՐԻՍ (Ցուլնատանի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացուցնէ և ցոյց կուտայ թէ Ցոյներն ի՛նչպիսի միջոցներու դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ) ,20 սանթիմ։


## ՆՄՈՅՇՆԵՐ

### Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իբրեւ նմոյշներ զանազան քաղաքներու մէջ և զանազան տպաւորութիւնները տակ իւրաքանչիւր գրած ոտանաւորներին որոնք ժամանակին հրատարակուած չի լինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորներ որոնք իբրեւ նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս տարածուած ազգային երգ արանների մէջ՝ որոց վերստին տպագրութիւնն վաղուց արդէն արդիլուած է, և Ասիա և Արմենիա լրագիրներին մէջ։ Նմոյշներու մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ թէ այդ ոտանաւորներ ի՛նչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են։ Գին (10 սանթիմ) 15 սանթիմ։

## ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՅ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՆ ԱՒՆՈՒԱՍ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

### ԳՐԵՑ ԱՊԼԱՂԱՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացուցնէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր տպականուած վարքուբարքով ոչ՛ փ չարիքների պատճառ դարձած է և վերջի ի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպաննուած և անհետացած է աշխարհէ։ Գին 1 ֆրանգ, (75 սանթիմ)։


ՅՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : François CARRIÈRE
ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi,
Allées de Meilhan, 44.